ԿԱՐԵՆ ՍՈՒՐԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Լրացավ Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հանրաճանաչ գիտնական-խաղողագործ՝ Կարեն Սուրենի Պողոսյանի 80-ամյակը:



Կ.Ս.Պողոսյանը, 1955թ. ավարտելով Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, գործուղվել է աշխատանքի Հայաստան և սկսած 1956 թ-ից, ավելի քան հինգ և կես տասնամյակ, աշխատում է Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտում, ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի բաժնում, իսկ 1974 թվականից՝ այդ բաժնի վարիչն է:

Կ.Ս. Պողոսյանն իր գիտական մկրտությունը ստացել է ակադեմիկոս Ն.Ի. Թումանովի լաբորատորիայում, ԽՍՀՄ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտում (Մոսկվա), 1961 թ. նրա ղեկավարությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն ,Խաղողի վազի կոփման և ձմեռելու ֆիզիոլոգիական առանձնահատկություններրբ թեմայով: Այդ հետազոտության մեջ հեղինակն առաջին անգամ բացահայտեց *V.vinifera* տեսակին պատկանող խաղողի սորտերի ֆիզիոլոգիական և կենսաքիմիական առանձնահատկությունները Հայաստանի խիստ կոնտինենտալ կլիմայական պայմաններում: Կ.Ս. Պողոսյանը 1970 թ. ԽՍՀՄ Գյուղատնտեսության նախարարության կողմից գործուղվում է Ճապոնիա, որտեղ Հոկայդոյի ցածր ջերմաստիճանների ինստիտուտում 15 ամիս կատարում է մի շարք արժեքավոր հետազոտություններ խաղողի վազի և պտղատուների հյուսվածքների ցրտից վնասվելու մեխանիզմների պարզաբանման, նրանց ֆիզիոլոգիական վիճակի գենետիկական և ֆենոտիպային առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ: Կ.Ս.Պողոսյանի այդ ուսումնասիրությունների արդյունքները զեկուցվել են ԽՍՀՄ-ի ամբողջ շարք խաղողագործական գիտահետազոտական ինստիտուտներում, գիտաարտադրական կենտրոններում հրավիրված գիտամեթոդական խորհրդակցություններում, ինչպես նաև արտասահմանյան միջազգային գիտաժողովներում:

Շարունակելով և ընդլայնելով այդ ուսումնասիրությունները, Կ.Ս.Պողոսյանը 1973 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, որում բազմակողմանիորեն հետազոտում է խաղողի վազի աճման և զարգացման առանձնահատկությունները հարավի խիստ կոնտինենտալ պայմաններում, բացահայտում է վազի վեգետացիայի և հանգստի շրջանում ի հայտ եկող ֆիզիոլոգիական և կենսաքիմիական փոփոխությունները, ցածր ջերմաստիճաններին խաղողի վազի դիմացկունության ձևավորումը, բույսի կոփման փուլերի անցման սպեցիֆիկան, ցրտադիմացկունության բարձրացմանը նպաստող ջերմաստիճանների ռեժիմը, միկրոկլիմայի և մի շարք այլ գործոնների ազդեցությունը:

Կ.Ս.Պողոսյանն առաջինն էր, ով տվեց խաղողի տարբեր ծագում ունեցող սորտերի ադապտացիոն ունակությունը կոփման և ձմեռման ընթացքում ցածր ջերմաստիճանների արագ փոփոխման պայմաններում, բացահայտեց վազի ջրակայուն վիճակը թուլացնող պատճառները, հիբրիդային սերնդում այդ հատկանիշի ժառանգման բնույթը, ինչպես նաև տարբեր ջերմաստիճանների ազդեցությունը խաղողի բույսի առանձին օրգանների վրա: Նա բացահայտեց վազի և պտղատեսակի հյուսվածքներում գերսառեցման և սառցակալման գործընթացների առանձնահատկությունները, հյուսվածքների բջիջներում ջրակալման և ներբջջային տարածություններում սառցակալման դինամիկայի միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը, պարզաբանեց այդ գործընթացների առանձնահատկությունները՝ կախված բույսի գենոտիպից և միջտեսակային ու ներտեսակային հիբրիդային սերունդներում դրանց ժառանգման

աստիճանից: Այս ուսումնասիրություններն իրենց արժանի արձագանքը գտան արտասահմանյան գիտական հանրության շրջանում, իսկ նրա կողմից մշակված խաղողի վազի և պտղատուների ցրտադիմացկունության աստիճանի արագ գնահատման լաբորատոր մոդելը լայն կիրառում ունեցավ մի շարք երկրների գիտահետազոտական և գիտաարտադրական կենտրոններում: Այն հնարավորություն էր տալիս արդեն առաջին 1-2 տարիների ընթացքում բազմակողմանիորեն գնահատելու սելեկցիոն նյութի ձմռադիմացկունության հատկանիշը, բացահայտելու գենոֆոնդի պոտենցիալ ցրտադիմացկունությունը:

Կ.Ս.Պողոսյանի ամբողջ գիտական գործունեությունը փաստորեն շարունակությունն ու զարգացումն էր ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Մ.Ք.Չայլախյանի գիտական ավանդույթների՝ կապված բույսերի ֆիզիոլոգիական ակտիվ վիճակների հետազոտման հետ, ինչպես նաև վաստակաշատ գիտնական-սելեկցիոներ, ԽՍՀՄ Գյուղատնտեսական ԳԱ ակադեմիկոս Ս.Հ.Պողոսյանի գործունեության:

Կ.Ս.Պողոսյանը խաղողի ութ նոր ցրտադիմացկուն սորտերի համահեղինակ է: Նրա առաջարկած սորտերը շրջայնացված են Հայաստանում և նրա սահմաններից դուրս (Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա): Դրանք օժտված են բարձր բերքատվությամբ, հիանալի հումք են տեսակավորված գինիների պատրաստման և խաղողի բարձրորակ հյութի ստացման համար:

Կ.Ս.Պողոսյանի բազմամյա գիտական գործունեության արդյունքները հրատարակվել են, ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան մասնագիտական հանդեսներում, մասնավորապես՝ Ճապոնիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում: Նա մոտ 220 գիտական հրապարակումների և 2 մենագրության հեղինակ է: Նրա ,Խաղողի վազի ցրտադիմացկունության ֆիզիոլոգիական առանձնահատկություններըե մենագրությունը (240 մամուլ ծավալով) 1984 թ. Համամիութենական Գյուղատնտեսական ԳԱ կողմից արժանացավ Կ.Ա.Տիմիրյազևի անվան ոսկե մեդալի, իսկ Բուլղարիայում հրատարակված ,Խաղողի ֆիզիոլոգիան և նրա մշակման հիմունքներըե գրքում ուրույն տեղ է գրավում Կ.Ս.Պողոսյանի կողմից ներկայացված մեծածավալ բաժինը (56 էջ):

Կ.Ս.Պողոսյանն ունի աշակերտների հզոր բանակ. նրա գիտական ղեկավարությամբ գիտությունների դոկտորի աստիճան են ստացել 4 գիտնական, մոտ ութ տասնյակ մասնագետներ (ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, Մոլդովայում, Ուզբեկստանում, Բուլղարիայում) արժանացել են գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կ.Ս.Պողոսյանը 1985-2007 թթ. համատեղել է գիտական և մանկավարժական գործունեությունը, դասախոսելով ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության, ինչպես նաև էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոններում:

Ակադեմիկոս Կ.Ս.Պողոսյանի բեղմնավոր գործունեությունն արժանացել է բարձր գնահատականի: Նրա կողմից սելեկցիոն ճանապարհով ստացված մի շարք սորտեր մրցանակների են արժանացել ինչպես միութենական, այնպես էլ միջազգային ցուցահանդեսներում (Էրֆուրտի միջազգային ցուցահանդեսում 8 ոսկե և 6 արծաթե մեդալների), իսկ տեխնիկական նոր սորտերի գինիների միջազգային համտեսների ժամանակ արժանացել են 9 ոսկե, 11 արծաթե մեդալների և առաջին կարգի 3 դիպլոմների: Ակադեմիկոս Կ.Ս.Պողոսյանը 1991 թ. Իտալիայի, 1994 թ. Բուլղարիայի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիաների թղթակից անդամ է, 1997 թ. Հայաստանի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, 1998 թ. Խաղողագործության և գինեգործության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, 2010 թ. Հայաստանի սպառողների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ:

Ակադեմիկոս Կարեն Սուրենի Պողոսյանն այսօր էլ շարունակում է իր ազգանվեր գործունեությունը՝ գիտելիքներն ու հարուստ փորձը հաղորդելով երիտասարդ մասնագետներին:

«Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբագրություն